

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«25» մարտ 2019թ.

No 713 - Լ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿԻՐԱՌՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱԶԱՓԸ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ
ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N 2 հավելվածի 15-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել

1) Պետության կողմից փոխհատուցվող հիվանդանոցային բժշկական ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանությունը՝ համաձայն N 1 հավելվածի

2) Հիվանդությունների ախտորոշման և բուժման ընթացքում կիրառվող անհրաժեշտ ծառայությունների, դեղերի և բժշկական նշանակության այլ

ապրանքների վերաբերյալ տվյալների ներկայացման ձևաչափը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ցուցանիշները՝ համաձայն N 3 հավելվածի:

2. ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալությանը, ֆինանսատնտեսագիտական վարչությանը՝

1) հիմք ընդունել սույն մեթոդաբանական մոտեցումները պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները հաշվարկելիս:

2) իրականացնել սույն մեթոդաբանության հիման վրա հաշվարկված գների ազդեցության գնահատում՝ ըստ ՀՀ պետական բյուջեի ծրագրերի:

3) յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում քննարկել սույն հրամանով հաստատված մեթոդաբանության հիման վրա պետության կողմից փոխհատուցվող հիվանդանոցային բժշկական ծառայությունների գների ապահովման հնարավորության հարցը:

3. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին առաջարկել՝

կիրառել սույն հրամանով հաստատված մեթոդաբանությունը վճարովի բուժօգնության ծառայությունների գները հաշվարկելիս:

4. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

ապահովել սույն հրամանի տրամադրումը Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին, ինչպես նաև Երևան քաղաքում գործող հիվանդանոցային բժշկական օգնություն իրականացնող Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ենթակայության և պետական պատվեր իրականացնող մասնավոր կազմակերպություններին:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արսեն Դավթյանին:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ